Երևանի պետական համալսարանում գործող
ՀՀ ԲՈԿ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
(հասցե՝ 0025, Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1)

ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոս իրավաբանական գիտությունների թեկնածու Արսեն Աշոտի Թավադյանի ԺԲ.00.03 «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ Աննա Արայի Մկրտչյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Իրավունքի ինքնապաշտպանությունը քաղաքացիական իրավունքում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքը նվիրված է քաղաքացիական իրավունքում իրավունքի ինքնապաշտպանությանը: Այս ինստիտուտը ցիվիլիստիկայի դասական ինստիտուտներից է, որի պատմությունը սկսել է հռոմեական իրավունքից, այնուհետև իր զարգացումն է ստացել Ֆրանսիայի, Գերմանիայի և եվրոպական մի շարք այլ երկրների քաղաքացիական օրենսգրքերում:

Հայաստանի քաղաքացիական օրենսգիրքը, հետևելով ԱՊՀ մոդելային քաղաքացիական օրենսգրքի դրույթներին, նույնպես նախատեսել է քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության հնարավորությունը: Սակայն ի տարբերություն նշված օրենսգրքի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ինքնապաշտպանությունը հիշատակված է ոչ միայն հոդված 16-ում՝ «Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանությունը», այլև հոդված 14-ում որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակ:

Այս հանգամանքը բավականին անհստակություն է բերում քաղաքացիական շրջանառության մեջ:

Բացի դրանից, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առկա են մի շարք այլ կարգավորումներ, որոնք հարաբերակցությունն իրավունքի ինքնապաշտպանության հետ պետք է ուսումնասիրվի: Մասնավորապես, ներխուժման կարգավորումը (հոդված 203), պահումը (հոդվածներ 373, 374), նոր ներմուծված հարևանային իրավունքի ինստիտուտը (գլուխ 14.2):

Այս տեսակետից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավունքի ինքնապաշտպանության կարգավորումների ուսումնասիրությունն արդիական է և անհրաժեշտ:

Հեղինակը կատարել է հետաքրքիր, խորը, համապարփակ հետազոտություն: Հետազոտությունն իրականացնելիս ուսումնասիրվել է մեծածավալ գրականություն: Աշխատանքում առկա են բազմաթիվ արժեքավոր հետևություններ, մտահանգումներ և տեղեկություններ:

Մասնավորապես, պարագրաֆ 1.1.-ում հեղինակն ուսումնասիրում է քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտի հասկացությունը և իրավական բնույթը: Ներկայացնում է այս ինստիտուտի զարգացման պատմությունը, տարրերը, գործառույթները, հարաբերակցությունը սուբյեկտիվ իրավունքների հետ: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ իրավունքի ինքնապաշտպանությունը բացարձակ իրավունք է, այն հիմնված է օրինական վարքագծի վրա, այն ուղղված է օրենքով նախատեսված իրավունքների պաշտպանությանը:

Վերլուծության արդյունքում նշվում է, որ արարքն ինքնապաշտպանություն որակելու համար անհրաժեշտ է երեք պայմանների միաժամանակյա առկայություն՝ (1) ինքնապաշտպանությունն իրականացվում է իրավազոր անձի կողմից, (2) արարքի համաչափություն խախտված իրավունքի բնույթի հետ, (3) ինքնապաշտպանության սահմանազանցման գնահատականը:

Պարագրաֆ 1.2.-ում հեղինակը հետազոտում է քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության, որպես պաշտպանության «ոչ յուրիսդիկցիոն» ձևի, կիրառման պայմանները: Այս պարագրաֆում ուսումնասիրվում «ձև», «միջոց», «եղանակ»

հասկացությունների հարաբերակցությունը: Իրավացիորեն նշվում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթները միասնական չեն և որոշ դեպքերում իրարամերժ: Այս խնդիրը հատկապես ակնառու է Օրենսգրքի 14-րդ և 16-րդ հոդվածների համեմատական վերլուծության դեպքում: Ստացվում է, որ ինքնապաշտպանությունը լինելով «պաշտպանության եղանակ», ունի նաև «եղանակներ»:

Պարագրաֆ 2.1-ում նկարագրվում է քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության եղանակների էությունը և դասակարգումը: Ներկայացվում են Բելառուսի, Լիտվայի և մի շարք այլ երկրների քաղաքացիական օրենսգրքերի նմանատիպ կարգավորումները: Օրենսգրքում տեղ գտած բնորոշումից հեղինակն առանձնացնում է հետևյալ վավերապայմանները՝ (1) իրավունքի ինքնապաշտպանությունը պետք է ուղղված լինի քաղաքացիական իրավունքների պաշտպանությանը, (2) քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանությունը պետք է իրականացվի օրենքով չարգելված եղանակներով, (3) իրավունքի ինքնապաշտպանության ընտրված եղանակը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը և դուրս չգա անհրաժեշտ գործողություններ իրականացնելու սահմաններից:

Պարագրաֆ 2.2.-ում հեղինակը ներկայացնում է օպերատիվ ներգործության միջոցների և ինքնապաշտպանության հարաբերակցությունը քաղաքացիական իրավունքում: Հեղինակի կարծիքով, քաղաքացիաիրավական պաշտպանության եղանակ հանդիսացող օպերատիվ ներգործության միջոցների կիրառումը պայմանավորվում է բացառապես պարտավորական հարաբերությունների առկայությամբ և օրենքով կամ պայմանագրով ամրագրված լինելու հանգամանքով: Մինչդեռ, քաղաքացիաիրավական ինքնապաշտպանության դեպքում կիրառման ինստիտուտների և փաստացի կատարվող իրավաչափ գործողությունների սահմանափակումներ իրավական տեսանկյունից առկա չեն:

Պարագրաֆ 2.3.-ում ուսումնասիրվում է ներխուժումը կանխելը կամ վերացնելը և պահումը որպես իրավունքների ինքնապաշտպանության եղանակներ: Հեղինակը նշում է, որ նպատակահարմար չէ ներխուժումը թույլատրելի համարել, ո՛չ իրավունքների ինքնապաշտպանության շրջանակներում կատարվող փաստացի գործողություն, ո՛չ էլ այն օժտել օրենսդրական կարգավորումներով և դիտել որպես իրավունքների

ինքնապաշտպանության եղանակ: Ուստի ինքնապաշտպանության եղանակ անհրաժեշտ է դիտարկել ոչ թե ներխուժումը, այլ դրա դեմ պայքարելու սեփականատիրոջ իրավունքները:

Պահման ինստիտուտի վերլուծության արդյունքում առաջարկվում է պահումը դիտել որպես իրավունքների ինքնապաշտպանության միջոց, սակայն դրա օրենսդրական ամրագրումը և կարգավորումներն անհրաժեշտ է չնույնացնել իրավունքների ինքնապաշտպանության ընթացքում իրականացվող գործողությունների հետ:

Պարագրաֆ 2.4-ը վերաբերում է անհրաժեշտ պաշտպանությանը և ծայրահեղ անհրաժեշտությանը որպես իրավունքների ինքնապաշտպանության եղանակներ: Նշվում է, որ անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության իրավական երևույթները պաշտպանության հնարավորություն են տալիս ոչ միայն սեփական իրավունքների, օրինական շահերի պաշտպանության համար, այլև սուբյեկտների, հասարակության կամ պետության շահերի համար (ծայրահեղ անհրաժեշտություն): Ուստի, հեղինակը կարծում է, որ անհրաժեշտ պաշտպանությունը և ծայրահեղ անհրաժեշտությունը կարող են համարվել ինքնապաշտպանության եղանակներ՝ պայմանավորված դրանց դրսևորման ձևից և սուբյեկտային կազմից: Ասվածը ենթադրում է, որ դրանք ինքնապաշտպանության իրականացման ինքնուրույն եղանակներ են համարվում:

Պարագրաֆ 3.1-ում հեղինակը վերլուծության է ենթարկում պայմանագրային պարտավորությունների կատարմանը նպաստող ինքնապաշտպանության եղանակների հասկացությունը և դասակարգումը: Հեղինակն առաջարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր դրույթներով ամրագրել իրավունքի ինքնապաշտպանության սահմանումը և այն եղանակները, որոնք կիրառվում են ընդհանուր կարգով; Բոլոր մնացյալ դեպքերում մասնավոր իրավունքի յուրաքանչյուր ինստիտուտի կամ համասեռ հարաբերությունների կարգավորող բաժինների համար ամրագրել իրավունքի ինքնապաշտպանության ընթացքում ձեռնարկվող գործողությունները և կիրառելի եղանակները: Կարգավորման այս ճանապարհին ընտրելիս, ըստ հեղինակի, անհրաժեշտ է հավասարակշռել մարդու ազատ գործելու սահմանադրական իրավունքը, քաղաքացիական օրենսդրության կամքի ինքնավարության սկզբունքն այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության սկզբունքների հետ:

Պարագրաֆ 3.2.-ը վերաբերում է սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված վինդիկացիոն և նեգատոր պահանջների փոխհարաբերակցությանն իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտի հետ: Հեղինակի կողմից իրականացված ուսումնասիրությունները հանգում են նրան, որ իրավունքների ինքնապաշտպանության քաղաքացիաիրավական ընկալման և ինստիտուտի օրենսդրական ամրագրման և գործնական կիրառության ապահովման համար այն անհրաժեշտ է դիտարկել նեղ իմաստով: Այդ ընկալումների շրջանակներում դատական ատյանին դիմելու հանգամանքը, մասնավորապես հայցի ներկայացումը չի կարող համարվել քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության միջոց: Հեղինակը նաև առաջարկում է վինդիկացիոն և նեգատոր հայցերի պարագայում ներդնել իրավախախտին կատարված իրավախախտման մասին ծանուցելու ընթացակարգ:

Պարագրաֆ 3.3.-ում հեղինակը քննարկում է իրավունքի ինքնապաշտպանության և հարևանային իրավունքի փոխհարաբերակցությունը քաղաքացիական իրավունքում: Հեղինակը եզրահանգում է, որ հարևանային իրավունքն ու իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտները քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորմանն ուղղված փոխկապակցված, սակայն առանձին համալիր ինստիտուտներ են: Հարևանային իրավունք որոշ դրսևորումներ, ըստ էության, հանգեցնում են իրավունքի պաշտպանությանը, մասնավորապես, իրավունքների ինքնապաշտպանությանը: Այնուամենայնիվ, դրանց զուգորդումը, ըստ հեղինակի, որևէ կերպ չի կարող համարվել դրանց նույնացման համար բավարար և անհրաժեշտ հիմնավորում:

Աշխատանքի ուսումնասիրության արդյունքում կարելի է հանգել այն եզրակացության, որ հեղինակը կատարել է ավարտուն աշխատանք՝ իրականացնելով լայնածավալ հետազոտություն, օգտագործելով տեսական, պրակտիկ բազմաթիվ նյութեր: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի կողմից հրապարակված տասը գիտական հոդվածներում: Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթները և համապատասխանում է ներկայացված աշխատանքին:

Այնուամենայնիվ, կարծում եմ, ատենախոսության մեջ առկա են առանձին վիճելի եզրակացություններ: Ցանկանում եմ հեղինակի ուշադրությունը հրավիրել դրանց.

1. Աշխատանքում առկա է որոշակի մեթոդական անհետևողականություն և առերևույթ ներքին հակասություն: Նախ, հեղինակը 33-ից 36-րդ էջերում ներկայացնում է ինքնապաշտպանությունը «լայն» և «նեղ» իմաստներով: Սակայն այս երկու իմաստների բնորոշումն այնքան էլ պարզ չէ: Հետագայում, 102-րդ էջում հեղինակը նշում է, որ «իրավունքների ինքնապաշտպանությունը գործնական կիրառելիություն կարող է ունենալ միայն դրա նեղ իմաստով դիտարկելու դեպքում (դրա կիրառելիության բացառումը պարտավորաիրավական հարաբերություններում)», իսկ 139-րդ էջում՝ նեղ իմաստով «ընկալումների շրջանակներում դատական ատյանին դիմելու հանգամանքը, մասնավորապես հայցի ներկայացումը չի կարող համարվել քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության միջով»:

Դրա հետ մեկտեղ, պարագրաֆ 3.1-ը վերնագրված է «Պայմանագրային պարտավորությունների կատարմանը նպաստող .ինքնապաշտպանության եղանակների հասկացությունը և դասակարգումը»: Այստեղ հեղինակն առաջարկում է «իրավունքի յուրաքանչյուր ինստիտուտի կամ համասեռ հարաբերությունների կարգավորող բաժինների համար ամրագրել իրավունքի ինքնապաշտպանության ընթացքում ձեռնարկվող գործողությունները և կիրառելի եղանակները»:

Այս տեսակետից առկա է որոշակի ներքին առներույթ հակասություն, որը պետք է պարզաբանվի հեղինակի կողմից՝ մի կողմից վերջինս պնդում է, որ կողմնակից է ինքնապաշտպանության նեղ իմաստով ընկալմանը, որը բացառում է պարտավորաիրավական հարաբերություններում դրա կիրառելիություն, մյուս կողմից՝ առաջարկում է առանձին հարաբերությունների համար (ենթադրվում է նաև պայմանագրային պարտավորական) սահմանել իրավունքի ինքնապաշտպանության կիրառելի եղանակները: Դրա հետ մեկտեղ ատենախոսությունում առկա է օպերատիվ ներգործության միջոցների վերաբերյալ հետազոտություն, որոնց կիրառումը, ըստ հեղինակի,

պայմանավորված է բացառապես պարտավորական հարաբերությունների առկայությամբ և օրենքով կամ պայմանագրով ամրագրված լինելու հանգամանքով:

2. Պարագրաֆ 2.3-ում հեղինակը առաջարկում է պահումը դիտել որպես իրավունքների ինքնապաշտպանության միջոց: Պարագրաֆ 3.2.-ում հեղինակը նշում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ և 277-րդ հոդվածներով նախատեսված վինդիկացիոն և նեգատոր հայցերը իրավունքների ինքնապաշտպանության երկու միջոցներ են: Կարծում եմ, սխալ է վինդիկացիոն և նեգատոր հայցերը ներկայացնել որպես իրավունքների պաշտպանության եղանակ կամ միջոց: Իրավունքների պաշտպանության եղանակը ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելն է, տիրապետումից զրկելու հետ չկապված խախտումների վերացումը պահանջելն է: Պահումը նկարագրում է այնպիսի իրավունքի պաշտպանության եղանակ, ինչպիսին է իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները կանխելը:

Ավելի ճիշտ է նշել, որ նշված եղանակները կարող են իրականացվել տարբեր ձևերով: Մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնումը գույքի տիրապետության հարցի դեպքում կարող է իրականացվել դատական ձևով՝ վինդիկացիոն հայց ներկայացնելով, կամ ինքնապաշտպանության ձևով՝ ներխուժումը կանխելով: Նույնը վերաբերում է նաև տիրապետումից զրկելու հետ չկապված խախտումները վերացնելու պահանջին, որը կարող է իրականացվել ինքնապաշտպանության մեխանիզմով, կարող է իրականացվել նեգատոր հայց ներկայացնելով: Պահմամբ նախատեսված իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները կանխելը կարող է դրսևորվել որպես օպերատիվ ներգործության միջոց:

Ընդհանուր առմամբ, հասկանալի է հեղինակի միտքը և եզրահանգումը: Այնուամենայնիվ, հեղինակը պետք է պարզություն մտցնի այս հարցի հետ կապված՝ բացառելու համար «հասկացությունների վերաբերյալ վեճը»:

3. Հեղինակն ուսումնասիրել է բավականին մեծածավալ գրականություն՝ ներկայացնելով բազմաթիվ խնդիրների վերաբերյալ տեսական կարծիքներ: Այնուամենայնիվ, հեղինակը հաճախ տարվում է որոշակի տերմինի վերաբերյալ առկա բոլոր տեսական մոտեցումները ներկայացնելու ցանկությամբ: Աշխատանքն ավելի պրակտիկ

կիրառելի դարձնելու տեսակետից ավելի արդյունավետ կլիներ, որ հեղինակը ներկայացներ համապատասխան նորմերի կիրառման խնդիրները: Իհարկե, այս ոլորտում հայաստանյան դատական պրակտիկան այդքան էլ հարուստ չէ, բայց հեղինակը սահմանափակված չէր և կարող էր հղում կատարել արտասահմանյան դատական նախադեպերին, հատկապես, որ քաղաքացիական հարաբերությունների կարգավորումը մայրցամաքային Եվրոպայում հիմնականում նման է:

Այսպես, հեղինակը 78-րդ էջում ներկայացնում է ինքնապաշտպանության վավերապայմանները, սակայն դրանց վերլուծությունը ցանկալի ծավալի չէ: Դրա հետ մեկտեղ հենց այս վավերապայմանների նկարագրությունն է շատ արժեքավոր վերլուծության ենթարկվող ինստիտուտի կիրառելիության տեսակետից:

4. Հեղինակն առաջարկում է վինդիկացիոն և նեգատոր հայցերի պարագայում ներդնել իրավախախտին պարտադիր ծանուցելու ընթացակարգ:

Այս առաջարկը որոշակիորեն դուրս է թեմայի հետազոտական շրջանակից և առանձին հետազոտության առարկա պետք է լինի: Նշեմ, որ հեղինակն այս առաջարկը ներկայացնելիս չի կատարել իրավահամեմատական և տնտեսական վերլուծություն, հղում չի կատարել որևէ վիճակագրական տվյալի: Կարծում եմ, այսպիսի առաջարկների դեպքում դա հրամայական է:

Վերը նշված դիտողություններն, այնուամենայնիվ, կրում են մեթոդաբանական, բանավիճային բնույթ, և ամենևին չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժանիքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Աննա Արայի Մկրտչյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Իրավունքի ինքնապաշտպանությունը քաղաքացիական իրավունքում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 08.08.1997թ.-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» կետ

7-ի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.03 «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝ Ա.Ա.Թավադյան

Դոցենտ, ի.գ.թ.

13.04.2023թ.

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Արսեն Աշոտի Թավադյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
դեկանի տեղակալ, իրավ. գիտ. դոկտոր.
պրոֆեսոր՝ Հ.Մ. Խաչիկյան